ՀԻՄՆԱՎՈՐՈՒՄ

«ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՔԱՂԱՔԱՑԻԱԿԱՆ ՕՐԵՆՍԳՐՔՈՒՄ ԼՐԱՑՈՒՄ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ» ՕՐԵՆՔԻ ՆԱԽԱԳԾԻ ԸՆԴՈՒՆՄԱՆ

1. Ընթացիկ իրավիճակը և իրավական ակտերի ընդունման անհրաժեշտությունը.

Դեռևս 2010 թվականից Կառավարությունը որդեգրել է առևտրային իրավաբանական անձանց շրջանում կորպորատիվ կառավարման սկզբունքների կիրառությունը խրախուսելու և այդ ուղղությամբ իրականացվող ծրագրերի առաջխաղացմանն աջակցելու քաղաքականություն: Համապատասխան միջոցառումներն ու գործողություններն ամրագրված են ՀՀ կառավարության որոշմամբ հաստատված մի շարք ծրագրերում:

Հաշվի առնելով նշված քաղաքականությունը՝ 2010 թվականի դեկտեմբերի 30-ին Հայաստանի Հանրապետության կառավարության թիվ 1769-Ա որոշմամբ հավանության է արժանացել Հայաստանի Հանրապետության Կորպորատիվ կառավարման կանոնագիրքը (այսուհետ՝ Կանոնագիրք):

Կանոնագիրքը մշակվել էր Տնտեսական համագործակցության և զարգացման կազմակերպության (ՏՀԶԿ) կորպորատիվ կառավարման սկզբունքների, Բանկային վերահսկողության գծով Բազելի Կոմիտեի «Բանկային կազմակերպությունների կորպորատիվ կառավարման կատարելագործման ուղեցույցի», «Պետական կազմակերպություններում կորպորատիվ կառավարման մասին» ՏՀԶԿ ուղեցույցի, ՎԶԵԲ-ՏՀԶԿ «Եվրասիայի բանկերի կորպորատիվ կառավարումը. Առաջարկների ժողովածու»-ի հիման վրա:

Հարկ է նկատել, որ ՀՀ օրենքներով բացակայում է գործադիր իշխանության մարմնի կողմից Կորպորատիվ կառավարման կանոնագիրք կամ համարժեք այլ փաստաթուղթ ընդունելու կամ դրա շուրջ առաջացող հարաբերություններ կարգավորելու համար ենթաօրենսդրական նորմատիվ ակտ ընդունելու անհրաժեշտ լիազորող նորմը: ՀՀ Սահմանադրության 6-րդ հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ Սահմանադրության և օրենքների հիման վրա և դրանց իրականացումն ապահովելու նպատակով Սահմանադրությամբ նախատեսված մարմինները կարող են օրենքով լիազորվել ընդունելու ենթաօրենսդրական նորմատիվ իրավական ակտեր: Լիազորող նորմերը պետք է համապատասխանեն իրավական որոշակիության սկզբունքին:

Բացի դրանից, անհրաժեշտ է օրենսդրական մակարդակում ստեղծել այն կառուցակարգերը, որոնք կնպաստեն սկզբունքների կիրառումը Ընկերությունների կողմից խթանելու համար: Ուստի, հաշվի առնելով Հայաստանի Հանրապետության կառավարության կողմից որդեգրված գործարար և ներդրումային միջավայրի բարելավման քաղաքականությունը՝ անհրաժեշտ է ներդնել Կորպորատիվ կառավարման Կանոնագրքի ընդունման և փոփոխման համար անհրաժեշտ լիազորող նորմ՝ նախանշելով նաև դրա կիրառման մոդելը:

2. Առաջարկվող կարգավորումների բնույթը.

1) Նախագծով առաջարկվում է Քաղաքացիական օրենսգրքով սահմանել Կորպորատիվ կառավարման կանոնագրքի հասկացությունը և դրա ընդունման համար անհրաժեշտ լիազորող նորմը: Սահմանել նաև դրա կիրառման կամավորության սկզբունքը, եթե օրենքով այլ բան նախատեսված չէ և կիրառվող իրավաբանական անձանց շրջանակը,

2) Այսպես, կորպորատիվ կառավարումը նպատակ ունի աջակցելու երկարաժամկետ ներդրումների ներգրավման նպատակով անհրաժեշտ վստահության և հաշվետվողականության միջավայրի կառուցմանը, կայուն աճի ու ֆինանսական կայունության ձևավորմանը:

Այս տեսանկյունից բազմաթիվ են միջազգային հեղինակավոր կազմակերպությունների հրապարակումներն ու հանձնարարականները, որոնք ընդգծում են կորպորատիվ կառավարման կանոնների կարևորությունն ու առանձնացնում են այն սկզբունքները, որոնք պետք է դրված լինեն կորպորատիվ կառավարման համակարգերի հիմքում:

Նախ՝ նշենք, որ ներկայումս տիրող իրավիճակի վերաբերյալ ամփոփ տեղեկություններ և կարևոր դիտարկումներ է պարունակում ՏՀԶԿ-ի կողմից Հայաստանում հակակոռուպցիոն բարեփոխումների վերաբերյալ հրապարակված զեկույցը[1], որում, մասնավորապես, անդրադարձ է կատարվում Հայաստանում ներդրված Կորպորատիվ կառավարման կանոնագրքին: Հիշատակված զեկույցում անդրադարձ է կատարվում կորպորատիվ կառավարման համակարգի ներդրման առումով Հայաստանում տիրող իրավիճակին և նշվում է, որ Կորպորատիվ կառավարման կանոնագիրքը Հայաստանում ընդունվել է 2010 թվականին և չի վերանայվել մինչ օրս: Նշվում է նաև, որ այն պարտադիր չէ մասնավոր կազմակերպությունների համար, չնայած ֆոնդային բորսայում ցուցակված ընկերություններից պահանջվում է բացահայտել Կանոնագրքի կիրառման

---

[1] Տե՛ս https://www.oecd-ilibrary.org/deliver/e56cafa9-en.pdf?itemId=/content/publication/e56cafa9-en&mimeType=pdf , էջ 118, 14.09.2023:

վերաբերյալ տեղեկություններ: Ըստ նշված զեկույցի՝ Կառավարության ներկայացուցիչների հետ ունեցած հանդիպումների արդյունքում պարզ է դարձել, որ Կանոնագրքին հետևող կազմակերպություններին պետական գնումների և մաքսային ընթացակարգերում տրվում են որոշակի առավելություններ, սակայն գործնականում դրա կիրառության վերաբերյալ որևէ տվյալ չի տրամադրվել: *Ընդհանուր առմամբ ՏՀԶԿ զեկույցի եզրակացությունն այն է, որ Կորպորատիվ կառավարման կանոնագրքի ներդրման համար անհրաժեշտ կառուցակարգեր ներկայումս ներդրված չեն:*

Այսպես, կորպորատիվ կառավարման համակարգի ներդրման տեսանկյունից առանձնահատուկ դերակատարում ունեն ՏՀԶԿ-ի կողմից հրապարակված՝ G20/OECD կորպորատիվ կառավարման սկզբունքները[2]:

Նշված սկզբունքները վերանայվել են 2023 թվականին և հատկանշական է, որ դրանցում առանձնահատուկ ուշադրություն է դարձվում կորպորատիվ կառավարման օրենսգրքերին/կանոնագրքերին: Մասնավորապես, նշվում է, որ «կորպորատիվ կառավարման կանոնագրքերը կարող են առաջարկել լրացուցիչ մեխանիզմ՝ աջակցելու ընկերությունների լավագույն փորձի մշակմանը և էվոլյուցիային՝ պայմանով, որ նրանց կարգավիճակը հստակեցված լինի»:

Ինչպես նշվում է, ՏՀԶԿ-ի կողմից հրապարակված՝ Կորպորատիվ կառավարման փաստագիրք 2023 հրապարակման մեջ[3], կորպորատիվ կառավարումը շարունակում է առաջնահերթություն մնալ և արդեն իսկ ներդրվել է փաստագրքի շրջանակներում ուսումնասիրված 49 պետությունների 70 և ավել տոկոսի օրենսդրություններում: Կորպորատիվ կառավարման օրենսգրքերը/կանոնագրքերը շարունակում են էական դեր խաղալ. քննարկված 49 պետություններից գրեթե բոլոր օրենսդրություններում առկա են ազգային կորպորատիվ կառավարման օրենսգրքեր կամ համանման գործիքներ՝ դրանց ներդրման տարբեր մեխանիզմներով: Օրենսդրությունների/իրավազորությունների ավելի քան երկու երրորդը հրապարակում է ազգային զեկույցներ կազմակերպությունների՝ այս կանոնագրքերին համապատասխանության վերաբերյալ. վերջին տարիներին սա համընդհանուր աճող մոտեցում է:

---

[2] Տե՛ս https://www.oecd-ilibrary.org/governance/g20-oecd-principles-of-corporate-governance-2023_ed750b30-en, 14.09.2023:

[3] Տե՛ս https://www.oecd-ilibrary.org/finance-and-investment/oecd-corporate-governance-factbook-2023_6d912314-en;jsessionid=oBzojmsjTX2AqnAwhZ7mkJ5ADQIy6thFi0vFFRrI.ip-10-240-5-71, 14.09.2023:

Նախ նշենք, որ կորպորատիվ կառավարման համակարգի ներդրման տեսանկյունից էական նշանակություն ունեն օրենսդրական դաշտն ու կարգավորող նորմերի սահմանումը, ինչն արձանագրվել է նաև վերոնշյալ աղբյուրում:

Մասնավորապես՝ հայտնի են կորպորատիվ կառավարման համակարգի ներդրման երեք մոդելներ՝ *կամավոր, պարտադիր և խառը:* Ինչպես նշվում է ՏՀԶԿ վերոնշյալ աշխատության մեջ, հարցված իրավազորությունների 82%-ն ունի կորպորատիվ կառավարման օրենսգիրք, որը հիմնված է ոչ պարտադիր՝ «փափուկ իրավունքի» վրա՝ «հետևիր կամ բացատրիր» սկզբունքի կամ համանման սկզբունքի համատեքստում: Ուսումնասիրված իրավազորությունների 18%-ը ներդրել է պարտադիր կամ մասամբ պարտադիր մեխանիզմներ, ինչը մի փոքր ավելին է 2021 թվականին արձանագրված 16%-ի համեմատ: Վեց իրավազորություններ (12%) (Կոստա Ռիկա, Հոնկոնգ (Չինաստան), Իսրայել, Մեքսիկա, Սաուդյան Արաբիա և Թուրքիա) նախընտրել են պարտադիր և կամավոր մեխանիզմների խառը համակարգ:

Միայն երեք իրավազորություններ որդեգրել են պարտադիր նորմեր սահմանելու մոտեցումը: Այս պետությունները չունեն ազգային կանոնագիրք կամ համարժեք մեխանիզմ «հետևիր կամ բացատրիր» սկզբունքի շրջանակներում և միակն են, որ ներդրել են իրավական պարտադրող մեխանիզմը: Հնդկաստանն ու Միացյալ Նահանգներն ապավինում են իրենց օրենքներին, կարգավորումներին և ցուցակման կանոններին, որպես իրենց կորպորատիվ կառավարման աղբյուր: Չինաստանի Ժողովրդական Հանրապետությունը ևս մեկ հետաքրքիր բացառություն է. վերջինիս ազգային Կորպորատիվ կառավարման կանոնագիրքը՝ վերանայված 2018 թվականին, ունի ամբողջովին նորմատիվ բնույթ, ուստի կարող է դիտարկվել որպես պարտադիր նորմերի ամբողջություն[4]:

Հետաքրքրական է Կորպորատիվ կառավարման կանոնագրքի հիշատակումը և կիրառությունը Եվրոպական ընկերությունների վերաբերյալ մոդելային օրենքի (European Model Companies Act (EMCA)) ստեղծման խմբի աշխատանքներում և այդ ակտի ու դրա բացատրական ուղեցույցի շրջանակներում[5]: Մասնավորապես, ընդհանուր եզրահանգումն այն է, որ երկրների մեծ մասը կորպորատիվ կառավարման կանոնագիրքն օգտագործում են որպես փափուկ իրավունք, որով էլ հիմնականում նախատեսում են այն կարգավորումները, որոնք ցանկալի են, սակայն տարբեր պատճառներով դեռևս օրենսդրական կարգավորման առարկա չեն կարող լինել: Այլ կերպ ասած՝ մի շարք կանոններ նախատեսվում են ընկերությունների վերաբերյալ օրենսդրությամբ, իսկ մի մեծ մաս էլ մնում է կորպորատիվ

---

[4] Տե՛ս նույն տեղում, էջեր 41-42:

[5] Տե՛ս European Model Company Act (EMCA), First Edition, 2017: https://papers.ssrn.com/sol3/papers.cfm?abstract_id=2929348, 14.09.2023:

կառավարման կանոնագրքերի կարգավորման տիրույթում: Այսինքն՝ ՏՀԶԿ-ի կողմից հրապարակված տվյալները վկայում են այն մասին, որ միջազգային ասպարեզում նկատվում է պարտադիր կանոններ/նորմեր սահմանելու աճի միտում:

Փաստագրքում նշվում է նաև, որ 2021-2022 թվականներին 16 իրավազորություններ փոփոխել կամ վերանայել են իրենց կանոնագրքերը կամ համարժեք փոփոխություններ են կատարել իրենց ցուցակման պահանջներում և կանոնակարգերում (օրինակ՝ Միացյալ Նահանգներ): Իրավազորությունների գրեթե երկու երրորդը վերանայել է իր կանոնագրքերը կամ համարժեք աղբյուրները 2019-ից 2022 թվականներին: Այս ժամանակահատվածում հինգ իրավազորություններ մեկից ավելի անգամ թարմացրել են իրենց կանոնագրքերը (Ավստրիա, Գերմանիա, Հոնկոնգ (Չինաստան), Սաուդյան Արաբիա և Միացյալ Նահանգներ): G20/OECD կորպորատիվ կառավարման սկզբունքների՝ 2015 թվականին կատարված վերջին վերանայումից ի վեր, հարցված բոլոր իրավազորությունների ավելի քան 90%-ը գոնե մեկ անգամ վերանայել է իր կանոնագրքերը կամ համարժեք դրույթները: Օրինակ՝ Գերմանիան ամեն տարի վերանայում է իր կորպորատիվ կառավարման օրենսգիրքը՝ պարզելու համար, թե արդյոք ներառված լավագույն փորձը դեռ արդիական է, թե այն համապատասխանեցնելու կարիք ունի. վերջին թարմացումն ուժի մեջ է մտել 2022 թվականի հունիսին: Մալազիան օրենսգիրքն ընդունելուց՝ 2000 թվականից ի վեր, չորս անգամ թարմացրել է իր օրենսգիրքը, վերջին անգամ՝ 2021 թվականին[6]:

Վերոնշյալ տվյալները թույլ են տալիս հանգելու այն եզրակացության, որ կորպորատիվ կառավարման կանոնագրքերը, էական նշանակություն ունենալով կորպորատիվ կառավարման զարգացած մշակույթ ձևավորելու հարցում, միևնույն ժամանակ պետք է ներդրվեն այնպիսի ճկուն համակարգի միջոցով, որը թույլ կտա պարբերաբար վերանայել դրանք՝ համապատասխանեցնելով միջազգային լավագույն փորձին և հաշվի առնելով միջազգային հեղինակավոր կազմակերպությունների կողմից առաջադրվող պահանջները: Հենց այս նկատառումներից ելնելով էլ՝ նախագծով առաջարկվող կարգավորումներով Կորպորատիվ կառավարման կանոնագրքի ընդունումը վերապահվում է ներդրումների խթանման ոլորտում կառավարության քաղաքականությունը մշակող լիազոր մարմնին, որպեսզի մոտեցումը թույլ կտա առավել արագորեն և արդյունավետորեն արձագանքել տեղի ունեցող փոփոխություններին և ներդրվող մեխանիզմներին: Այս համատեքստում նշենք նաև, որ դեռևս 2010 թվականին ՀՀ

---

[6] Տե՛ս https://www.oecd-ilibrary.org/finance-and-investment/oecd-corporate-governance-factbook-2023_6d912314-en;jsessionid=oBzojmsjTX2AqnAwhZ7mkJ5ADQIy6thFi0vFFRrI.ip-10-240-5-71, էջ 44, 14.09.2023:

կառավարության թիվ 1769-Ն որոշմամբ ընդունված Կորպորատիվ կառավարման կանոնագիրքն առ այսօր որևէ փոփոխությունների չի ենթարկվել (ինչն արձանագրվել էր նաև ՏՀԶԿ կողմից հրապարակված հակակոռուպցիոն բարեփոխումների վերաբերյալ զեկույցում), ինչը ևս վկայում է նախագծով առաջարկվող մեխանիզմի ընդունման անհրաժեշտության մասին. այսինքն՝ առ այսօր հաշվի առնված չեն և կատարված չեն անհրաժեշտ փոփոխություններ, որոնք, ինչպես նշեցինք, այդ ընթացքում բազմաթիվ են եղել:

Նախագծով առաջարկվող կարգավորումներն, ընդհանուր առմամբ, ուղղված են կորպորատիվ կառավարման կայուն և արդյունավետ համակարգի ներդրմանը՝ նախանշելով նաև դրա կիրառման մոդելը:

Այսպես, Կորպորատիվ կառավարման կանոնագիրքը տնտեսական ընկերակցության կամ ընկերության կառավարման արդյունավետության բարձրացման, մասնակիցների իրավունքների պաշտպանության, գործունեության թափանցիկության և հաշվետվողականության բարձրացմանն ուղղված սկզբունքներ և կանոններ պարունակող իրավական ակտ է: Ինչպես նշվեց, ՀՀ քաղաքացիական օրենսգրքում նախատեսվող ընդհանուր կանոնի համաձայն՝ Կորպորատիվ կառավարման կանոնագրքին միանալը կամավոր է, եթե այլ բան նախատեսված չէ օրենքով: Մասնավորապես՝ առաջարկվում է Կանոնագրքին միանալու որոշում ընդունելու հնարավորությունը վերապահել տնտեսական ընկերությունների մասնակիցների ընդհանուր ժողովին, եթե օրենքով կամ կազմակերպության կանոնադրությամբ այլ բան նախատեսված չէ:

Քաղաքացիական օրենսգրքով Կորպորատիվ կառավարման կանոնագրքին միանալու վերաբերյալ իրավանորմեր նախատեսելով՝ ոչ միայն ստեղծվում է Կորպորատիվ կառավարման կանոնագրքի կիրառման համար օրենսդրական ամուր հիմք, այլև ընդգծվում է կազմակերպությունների համար այդ համակարգի ներդրման և կիրառման կարևորությունն ու արդյունավետությունը: Նշված մոդելը հաշվի է առնում նաև միջազգային լավագույն փորձը՝ խրախուսելու Կորպորատիվ կառավարման կանոնագրքի կամավոր ընդունումն, ինչպես նաև օրենքով դրան միանալո պարտադիր հիմքեր նախատեսելու հնարավորություն է ընձեռում: Առաջարկվող մոդելն օրենսդրին թույլ կտա իր հայեցողությամբ և միջազգային նորմերի ու փորձի հաշվառմամբ սահմանել այն ոլորտները, որտեղ Կանոնագրքին միանալը պետք է լինի պարտադիր: Միևնույն ժամանակ, նման մոտեցումն իրավաբանական անձանց բավարար հայեցողություն և ազատություն է տալիս իրենց իսկ խնդիրների ու նպատակների հաշվառմամբ Կանոնագրքի կիրառության վերաբերյալ որոշում կայացնելու առումով:

3. Նախագծերի մշակման գործընթացում ներգրավված ինստիտուտները և անձինք.

Նախագիծը մշակվել է Էկոնոմիկայի նախարարության կողմից:

4. Նախագծի ընդունման կապակցությամբ լրացուցիչ ֆինանսական միջոցների անհրաժեշտության մասին.

Նախագծի ընդունման կապակցությամբ լրացուցիչ ֆինանսական միջոցներ անհրաժեշտ չեն:

5. Կապը ռազմավարական փաստաթղթերի հետ.

Նախագծի ընդունումը բխում է նաև 2020 թվականի հուլիսի 16-ի N 1202–Լ որոշմամբ ընդունված Կապիտալի շուկայի զարգացման ծրագրի երկրորդ մասի I «Կապիտալի շուկայի առաջարկը: Առաջարկվող գործիքները» հատվածի «Ոչ պետական պարտատոմսերի և բաժնետոմսերի շուկա» բաժնի 3.4.5՝ «Կորպորատիվ կառավարման կանոնագրքի պարտադիր նորմերի կիրառության ինստիտուցիոնալ մեխանիզմների սահմանում» կետից: Նշյալից զատ, նախագծի ընդունումն անհրաժեշտ է ՀՀ կառավարության կողմից 18 նոյեմբերի 2021 թվականի թիվ 1902-Լ որոշմամբ հաստատված Հայաստանի Հանրապետության կառավարության 2021-2026 թվականների գործունեության միջոցառումների ծրագրի N 1 հավելվածի «Էկոնոմիկայի նախարարություն» հատվածի 3-րդ նպատակի 3.2՝ «Ընկերություններում արդիական կորպորատիվ կառավարման համակարգերի ներդրման խթանում» միջոցառման իրականացման համար: